«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Պատմություն ,հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Կարապետյան

Ուսումնական հաստատություն՝ Հովտաշատի միջն. դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1.Հետազոտության հիմնախնդիրը ----------3

2. Ներածություն ----------4

3. Պատմական ակնարկ----------6

4. Գրական ակնարկ----------8

5. Բարոյական արժեքների դասավանդման ժամանակ միջառարկայական կապերի դերը----10

6Ինչպե՞ս է ձևավորվում ազգային արժեքային համակարգը հայոց պատմության դասերին----------11

7. Եզրակացություն/ամփոփում/ ----------13

8 Օգտագործված գրականություն ---------- ------15

9. Դասի պլան /օրինակ/ ----------16

Հիմնախնդիրը --- ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ և ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ և ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ



«Մարդկանց անհրաժեշտ են մարդկային բարոյականություն՝ հիմնված մարդկային էության,փորձի ,բանականության վրա»

Կլոդ- Ադրիան Հելվետիուս :

Ներածություն

Հասարակության զարգացման ներկա շրջանին բնորոշ է անհատի զարգացմանն ուղղված բազմակի պահանջներ:Կրթության արդիականացման հայեցակարգում այսօր խնդիր է դրված ոչ ստանդարտ մտածողությամբ երիտասարդ սերնդի ձևավորումը:

Նպատակը -Դպրոցի , ուսուցչի աշխատանքը պետք է ուղղված լինի նոր մտածողությամբ ,բայց ամուր արմատներով ,կարծրացած բարոյական արժեքներ ունեցող մարդու ձևավորումը:Իմ աշխատանքի նպատակն է ելք գտնել,այս խնդիրները վերհանելու և լուծումներ տալու համար:Ուզում եմ հասնել հետևյալ արդյունքներին.

Այս նպատակները իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել և կատարելագործել հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը,այլև մանկավարժական անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձը ,մեթոդները:Արևմտահայ մանկավարժ Նիկողայոս Զորայանը մտածում էր.«Ինչու համար դաստիարակութիւնը չի յաջողիլ ազգին

մեջ,կամ ինչ ընելու է ,որ ազգային դպրոցներն առաջ երթան»:Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը՝առաջարկելով վերակառուցել դպրոցը՝մոտեցնելով ազգային ակունքներին,բարձրացնելով հասարակության կենսամակարդակը և դպրոցները համալրելով մասնագիտական բարձր ունակություններ ունեցող մանկավարժ-դաստիարակներով:

Թեմայի արդիականացումը Ժամանակակից կրթության առջև ծանրացած խնդիրների լուծման գործում մեծ է պատմության և հասարակագիտության առարկաների ուսուցման դերն ու նշանակությունը: Արդի հարափոփոխ դարաշրջանում պատմության ,հասարակագիտության դասերի համար նոր խնդիրներ էն դրվում հասարակության առջև,որոնց լուծումից է կախված մատաղ սերնդի վաղվա օրը:Եթե կարողանանք ճիշտ և ժամանակին արձագանքել մարտահրավերներին նպաստավոր պայմաններ կստեղծենք բարոյապես բարձր արժեքներ ունեցող սերունդ դաստիարակելու համար: :Պատմական կրթությունն ապահովվում է սովորողների աշխարհայացքի ձևավորումը,ճանաչողության ինքնուրույնության և առողջ դատողության զարգացումը:Հասարակագիտությունը ապահովում է հասարակությունն ու մարդուն ճանաչելու գործընթացը,նրանց սոցիալական փոխհարաբերությունների կարգավորումն ու կազմակերպումը:Եվ քանի որ բարոյագիտության հիմնախնդիրներից մեկն էլ մարդու կատարելագործումն է,ուստի դպրոցն իր առջև պետք է խնդիր դնի ամեն կերպ ներգործելու մարդու հոգևոր աշխարհի,բնավորության գծերի,վարքագծի փոփոխության վրա:Կատարելագործման համար առաջին հերթին մարդը պետք է ճանաչի ինքն իրեն և դա մենք փորձում ենք իրականացնել օրինակ հասարակագիտություն առարկայի միջոցով ևս, դեռ 8-րդ դասարանից սկսած ,յուրաքանչյուր դասի ավարտին երեխայի ուշադրությունը կենտրոնացնելով Դավիթ Անհաղթի «Ծանի՛ր զքեզ» գրաբարյան գեղեցիկ արտահայտությամբ խորհրդի վրա :

Ժամանակակից կյանքի պայմաններում ուսուցիչը կրթական գործընթացում ստացել է ստեղծագործական լայն ազատություն,մեթոդների և ուսուցման հնարների ակտիվ որոնման ազատություն: Այժմ կրթության բարեփոխումների առաջնահերթ խնդիրներից է սովորողների իմացական ակտիվության շահագռգռվածության բարձր մակարդակի ապահովումն է: Կրթական քաղաքականության խնդիրը հասարակության և պետության ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովումն է: Այսօր իրականացվող կրթական բարեփոխումները չեն կարող չազդել կրթական գործնթացի վրա ,որին ներկայացվող առաջնային պահանջներից են ստացած գիտելիքների գիտակցվածությունն ու կիրառելիությունը:Հասարակության անընդհատ պահանջներից են.ինքնակրթությունը,մտավոր զարգացումը,մտածելու և ստեղծագոր-ծելու ունակության պահանջը, համեմատելու,խնդրին քննադատաբար մոտենալու,վեր-լուծելու ,արժևորելու կարողություններ:

Ինչպես իրավունքի ,այնպես էլ բարոյական նորմերն ու արժեքները դինամիկ են և ժամանակի ընթացքում վերաարժեքավորվում են՝կախված հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխություններից:Թե՛ իրավունքի ,թե՛ բարոյական արժեքների էությունը կանխորոշվում է հասարակության կեցության պայմաններով:

«Բարոյականությունն այնպիսի բան է,որը մեզ այլ բաներից ավելի շատ է հետաքրքրում:Մենք կարծում ենք,որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա»

ԴԵՅՎԻԴ ՀՅՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Իրավունքը և պետությունը գոյացել են միաժամանակ՝աշխատանքի բաժանման,մասնավոր սեփականության ծագման,ապրանքափոխանակության զարգացման և հասարակության դասակարգային շերտավորման հետ զուգնթաց: Նախնադարյան հասարակության ինքնակառավարման պայմաններում մարդկային հարաբերությունները հազարամյակների ընթացքում կարգավորվում էին սովորույթներով և կրոնական ավանդույթներով,որոնք պահպանվում էին խախտումներից հասարակական կարծիքով և համապատասխան վերաբերմունքով ,ինչպես նաև տոհմացեղային հեղինակությամբ,որոնք ընտրվում էին համայնքի ժողովի կողմից,առաջիններն էին հավասարների շարքում և փաստորեն իրականացնում էին իշխանությունը նախնադարյան դեմոկրատիայի պայմաններում:

Նախնադարյան տոհմացեղային համայնքից դեպի ստրկատիրական պետության անցումային դարաշրջանում ,պահպանողական սովորույթներն արգելակում էին հասարակության տնտեսական ու մշակութային առաջնթացը:Դա հակասում էր ազնվականության շահերին, որոնք ձգտում էին իրենց տնտեսական և քաղաքական տիրապետությունը հաստատել պետական մեխանիզմի ստեղծման միջոցով:

Պետության կազմավորման հետ զուգընթաց ձևավորվում է նաև իրավունքը, որի միջոցով ստրկատիրական դասակարգը ձգտում է իրականացնել իր քաղաքական իշխանությունը:Այն սովորույթները, որոնք այլևս չեն համապատասխանում ստրուկների շահերին, վերացվում կամ վերափոխվում են, սահմանվում են նոր սովորույթներ:Այդպի-սով՝ ծագում է դեռևս գրի չառնված սովորութային իրավունքը, որն արդեն արտահայտում է իշխող դասակարգի կամք ու շահերը և պահպանվում է խախտումից ստրկատիրական պետության ուժով:

Իրավունքի պատմությունից հայտնի է,որ իրավունքի ամենասկզբնական և ամենահին աղբյուրը եղել է սովորույթը,իսկ գործող հետևանքը սովորութային իրավունքը:Սակայն սովորութային իրավունք կարող էին դառնալ միայն հասարակության մեջ երկարատև և անընդմեջ գործադրվելու հետևանքով համապարտադիր վարքագծի կանոն դարձած սովորույթները:Ըստ հռոմեացի հայտնի պատմիչ Ուլպիանոսի՝«սովորույթը ժողովրդի լռելյայն համաձայնությունն է,որ որոշված է երկարատև փորձությամբ...»:Ըստ ռուս իրավաբան Շերշենևիչի կարծիքի՝սովորութային իրավունքը պետք է համապա-տասխանի հետևյալ պահանջներին .

ա/պետք է չհակասեն բանականությանը

բ/պետք է չխախտեն բարի ավանդույթները

գ/պետք է դրանց հիմքում չունենան մոլորություն

Սովորութային իրավունքի նորմերը հին և միջին դարերում հայ իրավունքի հիմնական աղբյուր են հանդիսացել ազգային դատաստանագրքերի համար:Օրինակ հե-տազոտողները ցույց են տալիս,որ Գոշի դատաստանագրքի երկրորդ մասի 130 հոդվածից 56-ը սովորութային իրավունքի նորմեր են:

Որքան հին էր սովորույթի վաղեմության ժամկետը,այնքան մեծ էր նրա հեղինակությունը հասարակական հարաբերությունները կարգավորելիս,քանի որ միջնադարում իրավունքի հեղինակությունը որոշվում էր նրա հնությամբ,իսկ հին իրավունքը իր հերթին նշանակում է բարի,արդար իրավունք:Սոցիալական նորմ կամ սովորույթ է նաև բարոյական նորմը կամ արժեքը,որոնք հենվում են հասարակական կարծիքի և հասարակական ներգործության միջոցների վրա:Բարոյականություն ասելով հասկանում ենք մարդկային վարքի կանոնների մի այնպիսի միասնություն,որն արտահայտվում է հասարակական տարբեր խավերի պատկերացումներ արդարության,լավի ու վատի,բարու և չարի մասին :Կան բարոյական արժեքներ որոնք դասակարգային բնույթ ունեն ,կան որ վերաբերում են հասարակության բոլոր խավերին:

«Ոչ ոք չի կարող լիովին ազատ լինել,քանի դեռ բոլորը ազատ չեն:Ոչ ոք չի կարող բարոյական լինել ,քանի դեռ բոլորը բարոյական չեն:Ոչ ոք չի կարող երջանիկ լինել քանի դեռ բոլորը երջանիկ չեն:»

Հերբերտ Սփենսեր

«Բարոյական կանոնները նման են նշանների,որոնք ճանապարհ են ցույց տալիս կյանքի ասպարեզում եվ ցույց են տալիս որոգայթներ»

Ս. Բուաստ

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության հիմքը,մարդկային բանականության հաստատման համար միակ ու ճշմարիտ ճանապարհը՝ ազգին հարիր, իր նախնիներից ազգային արժեքներ ժառանգած քաղաքացու ձևավորումն է:Պատմությունից ծանոթ անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու ու նրանց փոխանցման մեթոդները: Ուստի անհրաժեշտ են նոր մոտեցումներ մշակելու քայլեր:Այս հանգամանքն ավելի է բարդացնում արդի պայմաններում ազգային արժեքների պահպանման խնդիրը,որի լուծման հարցը ոչ միայն պետության ,այլև յուրաքանչյուր քաղաքացու խնդիրն է:Այս դարաշրջանը որպես հումանիզմի դարաշրջան նոր մարտահրավերներ է նետել. ստիպելով մեզ ձևավորել մերօրյա կշռադատված,գիտակցող,արմատներից ամուր կառչած էթնոսի կրող:Դաստիարակության գործում պետք է հաշվի առնենք .**ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը,ի՞նչ պահանջմունքներ,ինչ հետաքրքրություններ ունի,ինչպիսի ՞արժեհամակարգ-ով է առաջնորդվում**:Քանի որ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը դրանով էլ չափվում են նրա արժեքներն ու նպատակները:Սերունդներն օղակ են հանդիսանում անցյալի ու ապագայի միջև և ապահովվում են ոչ միայն տվյալ շրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը,այլև փոփոխությունը:Յուրաքանչյուր էթնոկրի սոցիալականացումը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել սկսած տվյալ ժամանակաշրջանին բնորոշ պատմական իրադարձություններով ,ավարտած մարդկային մտածելակերպի բարդ և անկառավարելի փոփոխություններով:1990-ական թվականների իրադարձությունները տարաբնույթ բացասական երևույթներ են առաջացրել մեր հասարակության մեջ և մոտ:Այս պայմաններում մենք ամեն ինչ պետք է անենք բացառելու կամ վերացնելու,փոխելու՝ դյուրին և հեշտընկալ համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս բացասաբար են անդրադարձել երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի և

արժեհամակարգի վրա:Այս պայմաններում ոչ միայն առաջնահերթ է ժամանակակից,քաղաքական ու տնտեսական,շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող,այլև ազգային մտածողությամբ, հայեցի դաստիարակությամբ օժտված սերնդի կերտումը:Այս գործին պետք է լծվեն բոլոր սոցիալական ինստիտուտները:Բարոյական արժեքները դրանք այն հենասյուներն են ,որոնք հնարավորություն են տալիս արժեքային կայուն հայացքներ ունեցող ,ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու և կրթելու :Այս խնդրի լուծման մեջ անգնահատելի դեր ունեն սոցիալական հետևյալ ինստիտուտները .առավելապես ընտանիքն ու դպրոցը՝որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեքներ:

Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի ու նրա տարրերի կրողն է ,այլև փոխանցողը:Ընտանիքի ներսում ձևավորված ավանդույթներն ու սովորույթները օգնում են հայեցի դաստիրակելու սերունդներին՝նրանց մեջ արմատավորելով ազգային ինքնագիտակցության ոգի:Ինքնության հարցը ներընտանեկան և միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվում է ազգային ինքնագիտակցության,մայրենի լեզվին տիրապետելու,պապենական արմատները ճանաչելու և ազգային սովորույթների պահպանման գործընթացներում:Ընտանիքում է երեխան յուրացնում հասարակական վարքագծային նորմերը,կանոնները,Իրականացվում է երեխայի առաջնային սոցիալականացումը,հարմարումը կյանքին:

Տարբեր ժամանակներ-------Մեզ համար գաղտնիք չէ,որ յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ նախասիրություններով, կողմնորոշումներով,և ավագ սերնդի կողմից ընդունված հասարակական կյանքի շատ նորմեր տարբերվում են հաջորդ սերնդի հայացքներից:Վերջիններս արագ հարմարվում են նոր իրավիճակին՝ձևավորելով արժեքային նոր համակարգ,որը արմատապես կարող է տարբերվել նախորդից:Իհարկե հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողական արժեքներով,քանի որ անընդհատ գալիս է նորը՝ համալրելով եղած արժեքները:Սակայն մենք պետք է քայլենք ժամանակին համընթաց,հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին և առաջնայնությունը տանք ազգային արժեքներին:

Դպրոցը-----Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման,ուսուցման և դաստիարակության գործում լուրջ ու պլանավորված անելիքներ ունի նաև դպրոցը,որի գերնպատակը և չափորոշչային պահանջներից մեկը բարոյական,ազգային արժեքներով օժտված,ազգային նկարագիր ունեցող սերունդ կերտելն է:Այն իր այդ կարևորագույն առաքելությունն իրականացնելու համար երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորման ու զարգացման քայլեր պիտի ձեռնարկի:Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները,որոնք ժառանգել ենք մեր նախնիներից,և որը մեր յուրահատուկ ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության և բազմազանության մեջ:Այստեղ կարելի է և պետք է օգտագործել մեծ դերակատարում ունեցող ժողովրդական բանահյուսությունը՝իր ժանրային բազմազանությամբ,որը երիտասարդ սերնդի ազգային ինքնության,բարոյական դաստիարակության գործնթացը կդարձնի առավել արդյունավետ նրա ունեցած բարոյադաստիարակչական մեծագույն արժեքով:Սովորողների հայեցի դաստիարակության գործնթացում շատ կարևոր է նաև

համամարդկային բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:Այդ ստեղծագործություններում ուշադրությունը պետք է կենտրոնացնել այնտեղ արտահայտված մեր ժողովրդի հոգեկերտվածքի աշխարհընկալման,մարդասիրական գաղափարների ու երազանքների վրա: Հայ ժողովրդի ավանդույթներում վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը,անդրդվելի կամքը,ներքին զորությունն ու հնարավորությունները,ապրելու ,վերածնվելու և հարատևելու ունակությունը,ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:Այս ամենն է որ անհրաժեշտ է փոխանցել ժամանակակից էթնոկրին:Այդպես նա կհասնի այն գիտակցությանը,որ հասարակական կյանքի առաջնթացը պայմանավորված է համախմբվածությամբ,գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ստեղծմամբ և պահպանելով:Սերունդ ,որ կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները,աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Բարոյական արժեքների դասավանդման

ժամանակ միջառարկայական կապերի դերը

Այսօր առաջնակարգ նշանակություն է ստացել դասապրոցեսը կազմակերպել առարկաների համագործակցությամբ ՝ միջառարկայական կապերով: Ուսուցման գործնթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են:Միջառարկայական կապերի մասին Յ.Ա. Կոմենսկին իր « Մեծ դիդակտիկա » աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փողկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն ոչ միայն ցույց տալ ,թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում , այլ նաև `ցույց տալ ,թե ինչու դա այլ կերպ չի կարող լինել:Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փողկապակցվածության մեջ»: Յուրաքանչյուր ուսումնական առարկա հարակից առարկաների համար միջառարկայական այս կամ այն տեսակի կապերի աղբյուրն է:

Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր

Ժամանակակից հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրը համընդանուր գիտելիքների,հմտությունների,դիրքորոշումների և արժեքների ամբողջական համակարգի ձևավորումն է դպրոցականի,շրջանավարտի մոտ,ինչը հնարավոր չէ իրականացնել ուսուցման գործընթացում առանց միջառարկայական կապերի հաստատման:Բազմակողմանի գիտակից մարդ ձևավորելու համար մեզ պետք է դպրոցում ավելացնել տարբեր հիմնարար միջառարկայական,ներառարկայական և վերառարկայական կապերը,ներդնելով ինտեգրված դասեր `ուշադրության կենտրոնում պահելով արժեքներն ու արժեքային համակարգը:Առանձին ուսումնասիրված

առարկաները հեշտությամբ մոռացվում են և չեն նպաստում շրջակա իրականության իրական պատկերը ստեղծելու կարևոր գործին:Միջառարկայական կապերի հաստատումը նպատակ ունի ուսուցման գործնթացը այնպես կազմակերպել որ սովորողների գիտական պատկերացումները լինեն ամբողջական:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԻՆ

Հայոց պատմությունը հայ ժողովրդի հավաքական հիշողությունը լինելով ներկայացնում է հայ ժողովրդին և ուսուցանում է պատմական փորձի հիման վրա:Հայոց պատմության մեջ ներկայացված են հայ ժողովրդի դարավոր կենսափորձն ու խորհուրդը:Հայ ժողովրդի պատմության իմացությունը յուրաքանչյուրիս պարտքն է,որովհետև այն ժողովրդի անցած ուղին չէ միայն, այլև նրա հողն ու ջուրը,նրա կերտածն ու ստեղծածը, նրա ոգին,բնավորությունն ու խառնվածքը:Հայոց պատմության միջոցով պիտի ձևավորենք ազգային գիտակցություն ու մտածողություն:Հայոց պատմության իմացությամբ կարող ենք իրականացնել ազգային իղձերը,ձևավորենք ու պահպանենք հայի կերպարը:Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական մեծ ներուժ ,հայրենասիրություն և արժանապատվություն:Միայն մեր գիտելիքներով և իմացությամբ կարող ենք նպաստել մեր երկրի ,մեր պետության բարգավաճմանն ու հզորացմանը,համաշխարհային հասարակության մեջ արժանի դեր և տեղ ունենալուն:

Հայոց պատմություն առարկայի նպատակներն են.

Վերը թվարկած նպատակներին հասնելու համար պետք է լուծել կրթադաստիարակչական հետևյալ խնդիրները.

1.Սովորողների մեծ ներարկել ամբողջական գիտելիքներ՝ազատության, անկախության ,պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին իր մասնակցությունը բերելու գաղափարներով:

2.Ուշադրությունը կենտրոնացնել ազգային ազատագրական պայքարի հերոսական դրվագների վրա,օրինակ բերելով հերոսների անձնազոհ սխրանքները:

3.Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային ձեռքբերումների ու համամարդկային մշակույթի մեջ ունեցած ներդրումների հետ:

4. Օրինակ բերել և ցույց տալ մեր ժողովրդի աշխատասիրությունը,շինարարական տաղանդի ու արարումների լավագույն նմուշները:

5.Դաստիարակել ձերմ հայրենասիրություն,հայրենիքի ,ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ հպարտություն,անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:

Բարոյական արժեքների ձևավորման համար չափազանց կարևոր նշանակություն ունի պատմական գործիչների մտադրությունների և գործողությունների գնահատումը: Պատմական անհատների նկատմամբ աշակերտների վերաբերմունքը միշտ էլ հուզական երանգ ու գունավորում ունի, այն կապված է հիացմունքի, հպարտության, սիրո, հարգանքի,խղճի ու կարեկցանքի, համակրանքի, ատելության, մերժման և այլնի հետ:Բացահայտելով պատմական անհատների բարոյական հատկանիշները՝ աշակերտների մեջ առաջանում է նրանց նմանվելու և իր մեջ հայրենասիրության, արիության, քաջության, տոկունության, սկզբունքայնության, աշխատասիրության, ազնվության, պարտքի և պատասխանատվության, ազգային արժանապատվության,համերաշխության և բարոյական այլ հատկանիշներ մշակելու ցանկություն:

Հայոց պատմուտյան բովանդակությունը բացառիկ է ազգային համատեքստում:Ապրելով տարբեր իրականությունների,կայսրությունների ու մշակույթների հաղորդակցության սահմանում հայ ժողովրդի պատմությունն ունեցել է քաղաքակրթական վերելքներով ու դրամատիզմով լի ընթացք:

Այսօր աշխարհում համակարգային փոփոխությունների և գլոբացման պայմաններում էլ ավելի կենսական անհրաժեշտություն է դառնում նախկին ԽՍՀՄ-ի ապազգային քաղաքական ռեժիմի դատապարտումը և դրա կրկնման բացառումը:

Դժվար է համաձայնվել այն մոտեցումների հետ,թե իբր ժողովրդավարական արժեքներ դավանող երկրները կարիք չունեն գաղափարախոսություն կերտող ժողովուրդների էթնիկական շահերին,որովհետև ապագաղափարայնացումը նրանց անպաշտպան է թողնում տարբեր գաղափարախոսական և մշակութային ազդեցությունների ժամանակ:

Գլոբալացումը մերժում է ազգայնականությունը,վտանգում ազգային արժեքները.ավանդական մշակույթը:Յուրաքանչյուր անհատ, յուրաքանչյուր հայ,ոչ թե «աշխարհի քաղաքացի» է, այլ ամենից առաջ,արյան պատկանելիությամբ ազգի ներկայացուցիչ, և դրա համար էլ ձգտում է ամեն կերպ էթնիկական նույնականացման:Ամեն մի ազգ ելակետ է ընդունում իր ազգային նպատակներն ու աշխարհընկալումը՝զուգորդելով քաղաքակիրթ համակեցության մշակույթը համամարդկային դրական արժեքներին:

Հայոց ազգային գաղափարախոսությունը մեծ դեր է խաղում նաև հայրենի բնօրրանից հեռու և այլ ժողովուրդների դավանաբանական,սոցիալական և գաղափարական միջավայրում ապրող հային ազգային-ընդհանրական արժեքների շուրջ համախմբման,հայապահպանության գործում:

Ժամանակի ու տարածության մեջ ստեղծելով ու պահպանելով մեր ազգային հարուստ մշակույթը,մեր ազգային ինքնությունը՝ մենք պարտական ենք մեր արժեքներին ,բարոյական արժեքներին ,մեր սովորույթներին և հարուստ ազգային ավանդույթներին:Մեր,պատմության,հայոց լեզվի ուսուցիչներիս առաջնահերթ խնդիրն է՝ յուրաքանչյուր դասի ժամանակ առանձնացնել ,աչքի առաջ ,ուշադրության կենտրոնում պահել յուրաքանչյուր թեմայի մեջ ուսուցանվող արժեքները և երեխաներին հնարավորություն տալ քննարկել,մեկնաբանել ,գնահատել և սովորել տվյալ թեմայի շրջանակում :

Եզրակացություն/ Ամփոփում/

Այսօր աշխարհում փոփոխությունները կատարվում են շատ արագ և արագընթաց տեմպերով՝անկանխատեսելիորեն:Մեր սովորողների աշխարհայացքը ձևավորվում է տե-ղեկատվության և գիտելիքների միջոցով:Այն ինչ ժամանակին անփոփոխ էր թվում ,այսօր այդ եզրույթը նույնիսկ կարելի է սխալ համարել:Մենք բոլորս այսօր գիտակցում ենք,որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս չեն կարող ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ,որոնք անհրաժեշտ կլինեն այսօրվա քաղաքացուն հասարակության մեջ և տնտեսական այս պայմաններում բարեկեցիկ կյանքով ապրելու համար:Ուստի այսօր ուսուցման մեջ փորձում ենք ներդնել այլընտրանքային նոր մոտեցումներ ու մեթոդներ՝որոնք հիմնականում ներառում են համագործակցային տարրեր:Այս տարերի իրագործման արդյունքում մենք տեսնում ենք,որ բարելավվում և բարձրանում են աշակերտներ գնահատականները և առաջադիմության աճ է նկատվել:Դասի ընթացքում նկատվում է աշակերտների փոխհարաբերությունների բնույթը.այն դարձել է ավելի ջերմ,մարդկային,աշակերտները սկսել են ավելի լավ հասկանալ միմյանց,մեծացել է աշակերտների իմացական ակտիվությունը և ստեղծագործական ինքնուրույնությունը:Այս մեթոդի կիրառումը մեզ օգնում է հասնել մեր նպատակների մի մասին.համագործակցության միջոցով մոտիվացնել,ներգրավվել և ուսուցման արդյունավետությունը բարձրացնել:

Գտնում եմ որ արժեքային համակարգի ձևավորմանը կարող ենք հասնել վերը նշված ուղղություններով,կարող ենք միայն հայրենասիրություն արմատավորելու հիմքով:Մեզ անհրաժեշտ է իրական և գործնական հայրենասիրություն սերմանել,գիտակցված և սովորեցնել սրտացավ մոտեցում այն ամենին ինչ վերաբերում է հայրենիքին ,և այդ հիմքի վրա կառուցել արժեքների «մեր տունը»: Եվ քանի որ հոգևոր-բարոյական պարադիգման/հարացույցը/ հայրենասիրությունն է այն դառնում է աշխարհայացքային,գաղափարախոսական,արժեքային և մշակութային կատեգորիա:

Դասը կառուցելու և ամփոփելու ժամանակ խորհուրդ կտայի բոլոր առարկաներից անդրադառնալ,արժևորել,գնահատել դասի մեջ առընչող յուրաքանչյուր արժեքի:Եվ այս արժեքային համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է դասի ընթացքում իրականացնել չափորոշչային կարողունակություններից `սովորել սովորելու կարողունակություն,լեզվական ու գրագիտության,սոցիալական կարողունակություն ,ինքնաճանաչողության,ժողովրդավարական և քաղաքացիական,մշակութային,մեդիա և թվային, գիտատեխնիկական և տնտեսական կարողունակություններ :Այս հմտություններով կարող ենք ստեղծել հասարակության մեջ ներգրավվելու պատրաստ քաղաքացիներ,որոնք կնպաստեն հասարակության և պետության բարօրությանը:

Օգտագործված գրականություն

Գիրք պատմության ուսուցման-----«Ինչո՞ւ, ինչպե՞ս»

Իրավունքի տեսություն---------«պետություն և իրավունք»

Իրավական գիտամեթոդական հանդես----«Վասն արդարության»

Մանկավարժական գիտամեթոդական հանդես---«Քաղաքացիական կրթությունը դպրոցում»

Հասարակագիտություն------«11-րդ դասարանի դասագիրք»

«Համամարդկային և սոցիալական արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում »

Սարգսյան Ա.Ա./գրախոսական

«Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը նոր սերնդի դաստիարակության գործում»/Աշիկյան Արմենուհի ԵՊՀ,Հայաստան

«Մարդ և հասարակություն» ---գիտամեթոդական վերլուծական ամսագիր

«Ամբերդ» -------մատենաշար

Դասապլան
Ուսուցիչ –Գայանե Կարապետյան **Դպրոց**---Հովտաշատի միջնակարգ դպրոց **Դասարան** ՝ 10-րդ **Աշակերտների քանակ** -- **Ամսաթիվ**---
Դասի թեման և հարցերը Նոր հարստության հիմնումը ։Արտաշես 1-ին -Ներկայացնել Արտաշես 1-ինին որպես մարդ -Ներկայացնել որպես քաղաքական գործիչ -Գործերի և բարեփոխումների ազդեցությունը իր հուշարձանի նախագծի վրա
Դասերի վերջնարդյունքները **Կարողանա** .Ներկայացնել Արտաշես 1-ինի գահակալման ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները .Արժևորել իրավիճակը ճկուն կերպով օգտագործելու՝ Արտաշես ստրատեգոսի կարողությությունը ,որի շնորհիվ Հայաստանը վերականգնեց իր անկախությունը .Կարողանա թվարկել բարենորոգումները,կատարած շինարարական աշխատանքները և բացատրել դրանց նշանակությունը
Կապը պատմական ակտիվ մտածողության սկզբունքների հետ Պատմական նշանակություն-սովորողները պետք է ընկալեն,որ պատմական նշանակության վերաբերյալ պնդումները կախված են անցյալի անձնավորությունների մասին ունեցած վիճարկելի պատկերացումներից --Ընկալեն,որ նշանակության մասին մտածելն ինքնին ենթադրում է մտածել այն չափանիշների շուրջ,ըստ որոնց որոշվում է այդ նշանակությունը։
Ռեսուրսներ Դասի ժամանակ օգտագործվելու է և՛դասագիրքը,և՛համացանցիցԱրտաշեսի մի շարք նկարներ,պաստառներ,հուշարձանների տեսակներ

Ուսուցչի գործողությունները Ներկայացնում է դասի նպատակը և քայլերը. -Նպաստել Արտաշես արքայի գահակալության շրջանի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը,Արտաշեսի միավորիչ գործունեությունը,բարենորոգումները,Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը և Արտաշես արքայի դերը հայոց պատմության մեջ բացատրելու,գնահատելու,արժևորելու կարողությունների զարգացմանը:	**Աշակերտների գործողությունները** Լսում են ուսուցչի ուղղորդումները,հարցերը և աշխատում ըստ քայլերի/սովորել-սովորելու կարողունակություն/
Դասի սկիզբ 5 րոպե	Աշակերտները ուսուցչի հարցադրումների օգնությամբ վերհիշում են Արտաշեսին վերաբերող բոլոր փաստերն ու Կատարած գործերը/սեղմ/--/լեզվական կարողունակություն ,գրագիտություն/
Փուլ 1-ին 15 րոպե	Դասարանը բաժանել 3 խմբի. -հանձնարարել ուսումնասիրել և սլայդով ներկայացնել հուշարձանների տեսակներ/մեդիա գրագիտ./ -Խմբերին հանձնարարել ստեղծելու հուշարձանային սեփական նախագիծ,որի ընթացքում նրանք կբանավիճեն ու կառանձնացնենԱրտաշեսին բնութագրող հատկանիշները/Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողուն./

Փուլ 1-ինի ամփոփում	-առաջին փուլի ամփոփման ժամանակ խմբերին առաջարկել սահմանել,թե իրենց կողմից նախագծված հուշարձանն ինչ դիտանկյունից պետք է ներկայացնի Արտաշես 1-ին. 1.տնտեսական 2սոցիալական 3.մշակութային 4.ժողովրդավարական /զարգացնել համապատասխան կարողունակություն/
Փուլ 2 10րոպե	Խմբերին հանձնարարել աշխատել ավարտուն տեսքի հասցնել հուշարձանային սեփական նախագծերը և ներկայացնել/օգտվել համացանցից/---գիտատեխնիկական և մշակութային կարողունակություն/
Ամփոփում 3-5 րոպե	Հարցադրումներով դասն ամփոփել. -Կարո՞ղ է առաջարկված հուշարձաններից որևէ մեկը դառնա մշակութային կոլորիտի մաս -Ինչի՞մասին ստիպեց մեզ մտածել այս աշխատանքը -Ինչպիսի՞ զգացողություն ունեցաք հուշարփձանների նախագծերին ծանոթանալիս /ինքնաչանաչողություն ու սոցիալական կորողունակություն/

‘: